ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

12 նոյեմբերի 2024 թվական, N 131-Ա

«ԱՐՄԵՆԻԱՆ ՈԼՆԱՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՀԱՏ ԳՅՈՒՂԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-014-0301-0031 ԾԱԾԿԱԳՐՈՎ 2.86807 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 29) ենթակետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառարավարության 17.06.2021թ. N 987-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 11) ենթակետով, հիմք ընդունելով «ԱՐՄԵՆԻԱՆ ՈԼՆԱՏ» ՍՊ ընկերության կողմից լիազորված անձ՝ Վարդան Ասատուրի Մաթոսյանի դիմումը, լիազորագիրը, urban.e-gov.am համակարգի միջոցով 04/11/2024թ. ներկայացված նախագծման թույլտվության հայտը, սեփականության իրավունքի N 21102024-06-0036 վկայականը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. «ԱՐՄԵՆԻԱՆ ՈԼՆԱՏ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող, Ալավերդի համայնքի Այգեհատ գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային 06-14-0301-0031 ծածկագրով, 2.86807 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքը փոխադրել ջրային հողեր նպատակային նշանակության, ջրամբարների կամ ջրային օբյեկտներ հողեր գործառնական նշանակության՝ 10 հազար խորանարդ մետր ծավալով ջրավազան կառուցելու նպատակով:
2. Հողի նպատակային նշանակությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարին՝ սահմանված կարգով կայացնել որոշում տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին և ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
5.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
8.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
9.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
10.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ՁԱԽԱՐՈՎ			
15.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., նոյեմբերի 12,
Լոռու մարզ, ք. Ալավերդի